

ԱՐՇԱԼՈՒՅՍ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 129

10 ՅՈՒՆՈՒԱՐ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Յունուար 11 † Կիր. դժ. Զ. օր Յայտնութեան եւ Մկրտութեան:
12 Բշ. դկ. Է. » » »
13 Գշ. աժ. Ը. » » »
14 Դշ. ակ. Պահոց
15 Եշ. բժ. Ս. Յովհաննու Կարապետին
16 Ուր. բկ. Պահոց
17 Շբ. գժ. Ս. Անտոնի Անապատականի:

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Չորրորդ տարի ◎ 10 Յունուար 1914 ◎ Թիւ 129

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաթերթը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 թուահամարաւ:

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Ս. Մատթ. Գլ. Գ., Ս. Մարկ. Գլ. Ա, Ս. Ղուկ. Գլ. Գ.,
Հ. ՎԷՆԹՈՒՐԱ.

«Ձայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Աստուած փառաց որոտաց. եւ Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց. ձայն Տեառն զօրութեամբ. եւ ձայն Տեառն մեծվայելչութեամբ:
(ՍԱՂՄ. ԻԸ.)

1. *Այս վսեմ, բանաստեղծական ասացուածները, որոնցմով արքայ մարգարէն (Դաւիթ) գուշակած էր արդէն սքանչելի բաները և հրաշքները, զորս Տիրոջ ձայնը պիտի գործէր փրկագործութեան ատեն Ջուրերուն վրայ, այնքան ճշգիւ չկատարուեցան, կ'ըսէ Պետրոս Ոսկիբերան, որքան որ կատարուեցան Յորդանան գետին մէջ Ս. Կարապետի ձեռքով Յիսուսի Քրիստոսի ընդունած Մկրտութեան խորհուրդին ատենը. վասն զի ա՛յն ատենն էր որ Տէրն մեր իր ներկայութեամբը աստուածային ույժ մը տուաւ Ջուրերուն, և խորհուրդներուն առաջինը հաստատեց: Ա՛յն ատենն էր որ Երկնաւոր Հայրը սքանչելի տեսարանը պարզեց լուսապայծառ բացուած երկինքին, և Հոգւոյն Սրբոյ՝ որ աղաւնակերպ եկաւ հանգչեցաւ Յիսուսի Քրիստոսի երկրպագելի գլխուն վրայ: Ա՛յն ատենն էր վերջապէս որ այս խոնարհ Որդին մարդոյ նոյն իսկ Հօր Աստուծմէ վեհաշուք և բարձրագոյն շեշտով Աստուծոյ ճշմարիտ Որդին ու աշխարհի Փրկիչը կը հռչակուի սա խօսքերով.* Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ: *Այս օր, ինչպէս կ'ըսէ Մարգարէն. ձայն Տեառն ի վերայ Ջուրց. ո՞ր ձայնը. Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ (Ճառ 159):*

Այդ է ուրեմն այն ձայնը, որուն համար

խօսեցաւ Դաւիթ մարգարէն. Ջուրերու վրայ վուրցուած ձայնը, ոչ թէ գետի մը միայն ջուրերուն վրայ, հապա բոլոր աշխարհի. ձայն զօրութեան, մեծվայելչութեան, փառաց, որ Յորդանանու եզերքներր վեհօրէն հնչելէն վերջր, բոլոր տիեզերքի մէջ պիտի արձագանգէ մինչեւ վերջը. Ձայն Տեառն ի վերայ ջուրց բազմաց. ձայն Տեառն զօրութեամբ. ձայն Տեառն մեծվայելչութեամբ. Աստուած փառաց որոտաց:

Արդարեւ մեծ, անճառելի եւ միեւնոյն ատեն զօրաւոր եւ ցանկալի խորհուրդ, կ'ըսէ Ս. Ամբրոսիոս: Միեւնոյն օրը, յորում երկրաւոր մայրը, սիրով գրկեց Յիսուս մանկիկը եւ հռչակեց զայն ճշմարիտ մարդ, երեսուն տարի վերջը՝ երկնաւոր Հայրը՝ գորովալից վկայութիւն կ'ընէ անոր, յայտարարելով զայն նաեւ ճշմարիտ Աստուած: Միեւնոյն օրը որուն մէջ Մարիամ զայն ներկայացուց մոգերուն, որպէս զի Անոր երկրպագութիւն ընեն, երկնաւոր Հայրը զայն կը ներկայացնէ ամբողջ տիեզերքի երկրպագութեան (Ճառ Ա.):

Օ՛ն ուրեմն, սիրելի եղբայրներս, բարձրացնենք այսօր մեր միտքերը եւ մեր սրտերը մեր Ս. Հաւատքին այս մեծ խորհուրդին վըրայ խորհրդածելու: Տեսնենք մեծամեծ հըրաշքները որ կը կատարուին մկրտութեան եւ շնորհաց կարգին մէջ: Դիտե՛նք Յիսուսի Քրիստոսի անձը, փառքը՝ որով կը յայտնուի, ճըշմարտութիւնները՝ որոնք անոր մէջ կը յայտնուին, խորհուրդը՝ զոր կը հաստատէ, խորհրդանշանները՝ զորս կը կատարելագործէ, վարդապետութիւնները եւ խրատները՝ զորս մեզ կը ներկայացնէ: Վերջապէս մանաւանդ տեսնենք Փրկչին այս Մկրտութեան խորհուրդին մէջ մեր մկրտութեան ծագումը, հաստատութիւնը եւ ոգին. որպէս զի սորվինք յարգել նոյն իսկ մեր վրայ այս մեծ խորհուրդը. այսինքն, աստուածային բարերարութիւններուն առաջինը, մեր պարտականութեանց ամենամեծը. եւ համապատասխանենք աստուածային բարութեանց հրաշքներուն՝ ամենաջերմ սիրոյ վերադարձով:

Առաջին մաս

2. Մկրտութիւնը կամ լուացումը, զոր Մկրտիչ կը մատակարարէր ժողովրդոց Յորդանանու եզերքը, խորհուրդ մը չէր. այլ Ս. Հարց եւ Մեկնիչներու կարծեաց համաձայն, մեղաւոր ըլլալնուն հրապարակական խոստովանութիւն մըն էր, որ կ'ընէին զայն ընդունողները. անոր համար կ'ըսուի թէ իրենց մեղքերը կը խոստովանէին (Մրկ. Ե.). զգաստանալու պատրաստութիւն մը, ապաշխարելու խոստում մը, Աստուծոյ ուղղուած փառաւոր աղօթք մըն էր, որպէս զի Աստուած իր ողորմութեամբը անոնց հոգիները մեղքէն մաքրէր, ինչպէս որ Յորդանանու ջուրը արտաքուստ կը մաքրէր անոնց մարմինը. վերջապէս անոնց սրտին զղջումին արտաքին մէկ նշանն էր, որ եթէ կատարեալ ըլլար, ամէն յանցանք կը ջնջէր (Ա-Լարիտ. յԳ. Մատթ.):

Արդ՝ եթէ այսպէս է, ինչո՞ւ համար Յիսուս Քրիստոս ինքն ալ Յորդանանու եզերքը կու գայ Յովհաննէսէն մկրտուելու (Մատթ. ԺԳ.). ի՞նչ պէտք ունէր, կ'ըսէ Ս. Ամբրոսիոս. մեղաւորներուն արարողութեան ինքզինքը ենթարկելու, այն որ սուրբ է՝ ինչո՞ւ համար մկրտուիլ ուզեց (Ամբր. Ճառ 1): Ո՛հ հեռացի՛ր, ո՛վ Տէր, վասն զի չի վայլեր որ Տէրը՝ ծառաներու, սրբութիւնը՝ մեղքին, Անարատ Մարիամու զաւակը՝ իժերու ծնունդի, Աստուծոյ անմեղ եւ մաքուր որդին, մարդոց անմաքուր եւ մեղաւոր որդւոց հետ շըփոթուի: Ո՛չ, ո՛չ, քեզի համար չէ այս լուացումը, որ երկնքի առջեւ քու վրադ բան մը չաւելցնելէն զատ, զքեզ երկրիս առջեւ շատ պիտի նուաստացնէր:

Բայց դուն ի՞նչ կ'ըսես, կը գրուցէ Ս. Ամբրոսիոս, թող ըրէ՛, թող ըրէ՛, ո՛վ քրիստոնեայ, եւ տե՛ս մեծ խորհուրդը: Յիսուս Քրիստոս կը ներկայանայ մկրտուելու՝ չէ թէ ջուրերէն սրբուելու, հապա ջուրերը սրբելու եւ իր լուացումովը՝ իր մարմինը թրջող հեղուկը մաքրելու համար (Անդ): Վասն զի, սուրբ, մաքուր, անմեղ, մանաւանդ նոյն ինքն անմեղութիւնը, սրբութիւնն ու մաքրութիւնը, ոչ միայն իբրեւ Աստուծոյ Որդի,

այլ նաև իբր որդի մարդոյ, մարդկային բնութիւն առնելով առանց մեղաց, այս ապաշխարութեան լուացումը՝ իրեն համար չի կատարեր, արդէն պէտք ալ չունէր, այլ՝ մեզի համար, իր մարմինը մերինը մաքրելու համար (Անդ)։ Ս. Օգոստինոս ալ ըսած է. Համակերպէ՛ր, ո՛վ քրիստոնեայ, որ Աստուծոյ որդին քեզի համար մկրտուած է, ինչպէս որ քեզի համար մեռած է (Ճառ. 29, յղգս. ժամ.)

Մնայի՛ր ուրեմն, ո՛վ Տէր, մեղաւորաց ամբոխին մէջ խառնուած, և իբրև անծանօթ մէկը՝ մանաւանդ ամէնէն գէշը եղածի պէս։ Ընդունէ նաև այս ապաշխարութեան մկրտութիւնը քու կարապետիդ ձեռքէն։ Այս արարողութիւնը որքան ալ քեզի համար նուաստացուցիչ է, նոյնքան ալ մեզի համար թանկագին է։ Եթէ դուն չհաւանիս ջրով լուալու քու ամենամաքուր մարմինդ, մեր աղտեղի հոգիները շնորհքէ զուրկ կը մնան և չեն սրբուիր։

3. Սակայն այսպիսի խորհուրդ մը լաւ եւս ըմբռնելու և Յիսուսի Քրիստոսի ներկայացուցած անձը աւելի լաւ ճանչնալու համար, յիշենք որ Ս. Պօղոսի վարդապետութեան համաձայն, այս Որդին Աստուծոյ մարդանալով՝ իր վրայ առաւ բոլոր հին մարդը՝ որուն մենք ամէնքնիս կը պատկանինք, բոլոր մարդկութիւնը, որ, ասոր համար բոլորովին Յիսուսի Քրիստոսի միջոցաւ խաչին վրայ գամուեցաւ։ Ս. Մաքսիմոս (եկեղեցւոյ վարդապետն) կ'եզրակացնէ թէ՝ Փրկչին ըրածէն աւելի ճշգրիտ և իրաւացի բան չէր կրնար ըլլալ. ինչու որ, ան ամբողջ մարդն առած էր իր վրայ և անոր տեղը դրած էր ինքզինքը. այսինքն ամէն վիճակի մէջ մտնել, ամէն խաւերէն անցնիլ, բոլոր թշուառութիւնները կրել, մարդկութեան ամբողջ խոնարհեցուցիչ վիճակները քաշել (Ցղգս. Մկրտութ. Բ. ի)։

Արդ՝ մարդկութիւնը մեղաւոր էր և չէր կրնար ուրիշ կերպով Աստուծոյ ներկայանալ բայց եթէ ապաշխարողի և յանցապարտի կերպարանքով. այս պատճառաւ, Յիսուս Քրիստոս որ այս մեղապարտ մարդկութիւնը իր վրայ առած էր, զգենլով մարմին մը, արտաքուստ՝ նման մեղքի մարմնոյ. Ի նմանութիւն մարմնոյ մեղաց (Հռմ. Ը.), պարտաւորեցաւ ինքն ալ յանցաւորի և ապաշխարողի պէս ներկայանալ Հօրը առջև։ Ճիշդ այս բանն է որ կ'ընէ այսօր ամենամեծ խոնարհութեամբ ենթարկելով ինքզինքը ապաշխարութեան մկրտութեան. այսինքն թէ այս մկրտութիւնով՝ Աստուծոյ որդին իսկապէս նոյն ինքն սրբութիւնը, հրապարակաւ ինքզինքը կը ճանչնայ և կը խոստովանի ու կ'ամբաստանէ կերպով մը՝ իբրև մեղաւոր և իբր մեղքի մարդ. Վասն մեր մեղս արար (Բ. Կորնթ. Ե.)։ Եւ միևնոյն ատեն իր վրայ կ'առնու պարտականութիւնը պաշտօնական կերպով մեղքի համար ապաշխարութիւն և անոր փոխարէն հատուցում ընելու և զայն քաւելու իր չարչարանքովը, մահուամբը և խաչովը։ Հաւանելով ուրեմն որ Մկրտիչը իր մաքուր ձեռքը դնէ ջերմեռանդաբար անոր մարմնոյն վրայ որպէս զի ջրով լուայ զայն, կը թոյլատրէ նոյն ատենէն սկսեալ որ Հրեաներն ու զինուորները միևնոյն աստուածային մարմնոյն վրայ երկնցնեն իրենց սրբապիղծ և անգութ ձեռքերը՝ զայն տէգով խոցելու, գամերով, ձաղկանքով և փշերով պատռտելու, վիրաւորելու համար։ Հաւանելով որ Յորդանանու ջուրը լուայ իր ամենանարատ մարմինը, նոյն ժամանակէն սկըսեալ կը հաճի որ միևնոյն մարմինը օր մը լուացուի նոյն իսկ իր արիւնովը։ Եւ այսօրուան ընդունած ջրոյ մկրտութիւնովը կը պատրաստէ ինքզինքը ընդունելու նաև արեան մկրտութիւնը՝ որով մեր բոլոր մեղքերը պիտի ջնջուէին, և որուն համար ինքը ըսած էր. «Եւ մկրտութիւն մի ունիմ մկրտել, եւ զիա՞րդ փութամ մինչեւ կատարեսցի» (Ղկ. ԺԲ)

Նա մանաւանդ այն վայրկենէն, կ'ըսէ Ալպերտէ, իր ամենասուրբ սրտին դառնութեան մէջ, անսահման զղջումով մը, կատարեալ ցաւով մը, մեր մեղքերուն վրայ կը ցաւագնի, զանոնք կ'ատէ եւ կ'ողբայ. լուացուիլ ու մաքրուիլ կ'ուզէ իբրև թէ ստուգիւ անձամբ ինքն եղած ըլլար մեղաւորը, մինչդեռ իր անհուն սէրը միայն իր վրայ առնուլ տուած էր զանոնք իբրև իրենները (Ալբ. յԳ. Մատթէի)։

4. Այս հանդիսաւոր պարագայիս մէջ ուրեմն, ցաւեցաւ մեր մեղքերուն վրայ սնկեղծ եւ կատարեալ զղջմամբ, զոր պէտք էր որ մենք ունենայինք. բայց բնաւ երբեք պիտի չկարենայինք ունենալ. եւ որովհետեւ ուզեց որ մենք ամէնքս իրմով ներկայացուելով լուացուած ըլլայինք, այս պատճառաւ յանձնաւոր եղաւ ամէն տեսակ նուաստացումի, երկնից եւ երկրի առջեւ ամէն տեսակ հակառակութեան, մեղաւոր եւ մինչեւ իսկ նոյն ինքն մեղքն երեւնալու. բայց մեր մէջ տարածեց ու լեցուց անհուն արդիւնքը այս խոստովանութեան, այս ամբաստանութեան այս ցաւոյն, այս լուացումին, այս ապաշխարութեան, և մեզի համար չահեցաւ ուսուածային զարդը իր անսահման արդարութեան, իր սրբութեան եւ անվախճան պայծառութեան. «Որ ոչն գիտեր զմեղս, վասն մեր մեղս սուար. զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ (Բ. Կորնթ. Ե)»։

Ասոր համար իր ամենամաքուր մարմինը Յորդանանու մէջ լուալով Յիսուս Քրիստոս ուրիշ բան չրրաւ, ինչպէս կ'երգէ Ս. Եկեղեցին, բայց եթէ լուալ մեր ամենաաղտեղի հոգիները։ Ս. Ամբրոսիոս ալ կ'ըսէ. Տէրն մեր ջուրը մտնելով, իր հետը թաղեց եւ նոյն վայրկենին ջնջեց իրեն հաւատացողներուն բոլոր յանցանքները։ Եւ ինչո՞ւ չի ջնջեր ամենուն մեղքերը, քանի որ ամենուն մեղքերը իր վրայ չարկած էր։ Այն ատեն կատարուեցաւ Ս. Աւետարանին մէջ նշանակուած Ս. Յովհաննու արտասանած մեծ խօսքը. «Ահա Գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի»։ Ո՛վ սքանչելեացս. ո՛վ սքանչելի խորհուրդ։ Այսօր միայն մէկ հոգի ջուրը մտաւ, եւ այսմէկ՞ հոգւոյն միջոցաւ ամենուն փրկութիւնը հոգացուեցաւ. (Ս. Ամբր. ճառ 4)։

(Շարունակելի)

Թարգմ.
Մ. Վ. ՄԵՂՄՈՒՆԻ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ (*)

ՊԷՏԻՆ ՃԻ ՊՅԱ.Պ

Յիսուս Քրիստոս իւր ինսան եվլաթը վէ եէմ ֆէ Ա.ղաներն էվլաթ ֆրը։

Զաթէն եօգարտա զիքր էթմիյիմիզ վէ Յիսուսն սահմա իթթիխազ էյլէտիյի վէ Ս. Աւետարանլարտա սէքսէն տէգիաան զիյատէ գուլլանրլան ինսան եվլաթը կիպի պէօյիւք պիր իսմ, օնուն հագրգի թապիաթընդն զարիպ վէ ճէրպ սուրէթէ պիր պէյանը իտի։ Զիւնքի, Աստուն սիկէր էվլաալարը կիպի պիր եվլաs օլմայուպտա, ինսանը քեամիլ օլան վէ եալընրզ պու տէգիա իչուն ինսանլրգ իտեալրնրն իսթիքմալ էյլէտիյի պիր ինսան եվլաtр օլմագլրգ Յիսուսա նէ՛րէտէն կէլէպիլմիշտիր։ Հէմ նա՞սրլ օլուպտա քէնտի քէնտիսինի պիլիյօր, վէ պու սէպէպտէն տէ քէնտինին, պէշէրիյէթին պաշը օլտուղընը վէ էյէր պէշէրիյէթ քէնտիսիյլէ պիրլէշէճէք օլուրսա, եալընրզ քէնտիսի օնր գալսըրապիլէճէք, չիֆաեապ էտէճէք. թէնվիր էյլէյէճէք իտուկինի սէօյլէյօր։ «Բէտէր հէր իդթիտարը օնա վէրմիշ տիր, չիւնքի ինսան եվլաtр տրր»[1]. «Աsեմ օղլու զաիպ օլմուշ օլանը արամագ վէ խէլաս էթմէք իչուն կէլմիշ տիր»[2]. «Էյէր Աsեմ օղլուընրն թէնինի եէմէզ վէ օնուն գանընտան իչմէզ իսէնիզ, նէֆսլէրինիզտէ հայաթընզը օլմայաճագ տրր։»[3] «Էն պէօյիւք օլմագ իսթէսէն, խրտմէթքեարընրզ օլսուն. զիրա Աsեմ օղլու քէնտինէ խրտմէթ օլունմագ իչուն տէյիլ, իլլա խրտմէթ էթմէք վէ չօգալարն խէլասը իչուն նէֆսինի ֆէտա էյլէմէք իւզրէ կէլմիշ տիր»։[4]

Պու վէ պունդն կիպի պիր չօգ այէթլէր, սէվիյէի ումումիյէտէն օնուն եիւքսէք պուլունտուղընը, վէ՝ իսթիյարի օլարագ, միւշմիւշ օլան նէվիմիզ եէթիշէճէք գասար օնրն թէնէզզիւլիւնիւ իֆատէ էտէն պու այէթլէր, զաթէն ֆիքրիմիզճէ, օնրն այլահլըզը պինասընդն ճէպհէ վէ տէհլիզինի թէշքիլ էտէրլէր։

[1] Յովհ. Ե. 27։— [2] Մատթ. ԺԳ. 11։— [3] Յովհ. Զ. 53։— [4] Մատթ. Ի. 27։

(*) Տես՝ Ս. Գ. Տարի թիւ 127, էջ 822։

Ֆագաթ քէնտի քէնտինի Ատէմ օղլու
թէսմիյէ էթտիյի կիպի, տահա վազիհ սու-
րէթտէ տէ Ալլահըն էվլատը տա թէսմիյէ էյ-
լէրտի: Ալլահըն էվլատը, օնուն պիր տանէճիք
օղլու, տօղըլարտան էվվէլ բէտէրտէն տօղ-
մուշ, կէօյլէրտէն ինուզուլ էյլէմիշ օլտուղու-
նը, օրայա թէքրար չըգմայա վէ քէնտիսի
իլէ պէրապէր ինսան ճինսինի տէ չըգարմայա
եալընըզ քէնտիսինին մուգթէտիր օլտուղունը
թաստիգ էտիյօր:

Ալլահըն էվլատը! Իշթէ պիւթիւն ալէմին
օնը հաս էթտիյի իսմ: Պետրոս օնուն այագ-
լարընա գափանըր վէ տէր, «Սէն տիրի Ալլա-
հըն էվլատը Քրիստոս օլտուղունա ինանըըըմ»
Թովմաս օնուն էլ վէ այագլարընըն եարա-
լարընա էլլէրիյլէ տօգունտուգտան սօնրա
«Սէն պէնիմ Ռապպիմ վէ Ալլահըմ սըն:» Վէ
ֆուրթունայը թէսքին իթտիյինտէ պիւթիւն
Առաքեալլար «Սէն սահիհէն Ալլահըն էվլատը
սըն» եօլունտա իգրարտա պուլունուրլար:

Պու իգրարլարա Յիսուս նէ՞ ճէվապ վէ-
րիր: Աճէպա օնլարըն պու իֆատէսինէ
հայրէ՞թ մի իտէր: Աճէպա Ալլահըն մու-
գատտէս իսմինին մախլուգաթա վէրիլմէսինի
կէօրիւր կիպի հիտտէթլէնի՞ր մի, աճը՞ մը
տույար: Իւչ սէնէ սօնրա ճէմաաթ Պօղոս
վէ Բառնաբասըն թալիմաթ վէ միւճիզաթ-
լարընտան միւթէէսսիր օլարագ անլէրէ սէճ-
տէ էթմէք իսթէտիքլէրինտէ, Պօղոս հիտ-
տէթլէնիր, Բառնաբաս էլպիսէսինի եըրթար,
հէր իքիսինին տէ գալպի սաֆլէրինտէն չու-
նիտա չըգար քի «պիրատէրլէր, նէ՞ եափը-
յօրսունըզ, պիզ ինսանտան մաատա պիր չէյ
տէյիլիզ»: Յովհաննէս Մկրտիչին տախի ճէ-
մաաթը իղֆալ էթմէմէք իչուն գուլլանտըղը
չարէի իհթիրազլարը սա տէր իաթըր էտէ-
լիմ: Օնուն աղզընտա սախիմա չու քէլամլար
տէվէրան էտէր քի «Պէն Քրիստոս տէյիլիմ,
պէքլէտիյինիզ պէն տէյիլիմ»: Ալլահա վաճիպ
օլան իհթիրամա խալէլ կէթիրմէմէք իչուն
Մովսէսին իպրազ էթտիյի ղայրաթը, օնուն
ալիճէնապանէ հիտտէթինի վէ մէզարընըն
մահալլինի կիզլէմէսինի քի՞մ պիլմէզ: Հալ
պու քի Քրիստոս թարաֆընտան պունլարա
միւմասիլ հիչ պիր չէյ վագը օլմայօր: Հէր
քէս օնա Ալլահ, Ալլահըն էվլատը, Ալլահըն
սահիհ էվլատը իսմինի վէրիյօր վէ օ գատար
թէմիզ, հալիմ, ալչագ վէ տուրէնտիշ օլան
օ վիւճուտը մուգատտէս քէնտիսինէ Ալլա-
հըն էվլատը իսմի վէրիլմէսինէ վէ օնա կէօ-
րէ տէ սէճտէ էտիլմէսինէ պիլա իթիրազ
միւսաատէ էյլէյօր:

Եալընըզ պու ինվանը գապուլ էթմէքլէ
քիֆայէթ էթմէյուպ, քէնտինէ պու իսմի
վէրէնի թագտիր, թահսին էյլէյօր վէ միւ-
քեաֆաթլայօր: Սիմոն Պետրոս օնուն Ալլահ-
լըղըը իգրար էթտիքտէն սօնրա, «Մութլու-
սուն, տէր օնա Քրիստոս, պու իգրարըա
պուլունմայը սանա նէ էթ վէ նէ տէ գան,
եանի էֆքեարը պաթըլա, ճէհալէթ վէ հէ-
վայը նէֆսանիյէ, վէրմէմիշ տիր. իլլա սէ-
մավաթտա օլան Բէտէրիմ վէրմիշ տիր: Պու
սէպէպտէ մէյտնի սանա տէրիմ քի, սէն գա-
յասըն, վէ պէն Քիլիսամը պու գայա իւզէ-
րինէ պինա էտէճէյիմ, վէ ճէհէննէմ գա-
բուլարը օնա գարշը աճիզ գալաճագ տըր-
լար:»

Յիսուս Քրիստոս պու իսմի քէնտինէ վէ-
րէնլէրի թագտիր, թահսին էթմէքտէն տէ
տահա իլէրի կիտիյօր. պիզզաթ քէնտիսի օ
իսմի ալըյօր վէ տիւզէլթմէք եա գուրթարմագ
իսթէտիքլէրի քի մէլէկլէրտէն քէնտիսինէ օ
իսմի վէրմէլէրինէ սէպէպ թէհյիյէ էյլէյօր:
Աստատան տօղմա քէօրէ «Ալլահըն էվլատըն
ինանըրմըսըն» տէյէ սօրար. քէօր իսէ հէնուզ
աչըլմըշ օլան կէօզլէրինի Յիսուսա գալտը-
րարագ «Ալլահըն էվլատը քի՞մ տիր քի օնա
ինանայըմ» եօլունտա ճէվապ վէրինճէ, Յի-
սուս անինտէ «սէն օնը կէօրտիւն, վէ չիմ-
տի սէնինլէ սէօյլէյէն իշթէ օ տըր. «Եւ
տեսեր զնա, և որ խօսին ընդ քեզ նա է»
ճէվապըյլա մուգապէլէ էտէր: Պունըն իւ-
զէրինէ քէօր եէրէ գափանըր վէ օնա սէճտէ
էյլէր: Տահա պունտան ֆազլասընա Ըւզում
վա՞ր մը: Էյէր Յիսուս Քրիստոս Ալլահ տէ-
յիլսէ, պու հարէքէթը ճինայէթէ թահրիք էթ-
մէք տէյի՞լ մի տիր:

(Մապատի վար)

ՄԱՆԱՆԱՅ
(Գրեց՝ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ)

Մանանա՜յ... Անունէն մի՛ խաբուիք. երկինքէն իջած մանանդ մը չէ այս, այլ՝ գրական ձեւերու տակ խարդաւանանքի թոյն մըն է, որով Օտեան ամէն չարաթ հոգիները մոլորեցնելու կը ջանայ։ Չէ՞ք հաւատար. կարդացէ՛ք անոր իններորդ թիւին վերջին յօդուածը, որուն մէջ աւելի ևս երեւան կուգան անոր գրական պարկեշտութենէ բոլորովին չեղող յատկութիւնները։

Այս գրողը կը ձգտի հերքել Կ. Արձագանգի 125 թիւին առաջին յօդուածը, ուր անգիմադրելի փաստերով ցոյց տրուեր և դատապարտուեր էր՝ վերջերս հրատարակուած Նաւասարդ Տարեգիրքին առաջնորդող ոգին, որ անկրօնութիւն է, յուսահատութիւն և անբարոյականութիւն։

Նպատակին հասնելու համար՝ Պարոնը ձեռք կ'առնու իր կեղատ զէնքերը, սորբին հեգնութիւնը, նենգութիւնը եւ հայհոյութիւնը։

«Կ. Արձագանգ»ին դէմ քանի մը վատ շաղփաղփութիւններ եւ խեղկատակութիւններ թափթփելէ յետոյ, մէջ կը բերէ Դանիէլ Վարուժանի մէկ քերթուածը ամբողջովին, և խեղճը կը յարէ. «Մեր փարիսեցի Ռուբէնը (Կ. Արձագանգի յօդուածագիրը) այս վեհաշուք տողերը կը գտնէ պժգալի, ամբարիշտ, նիւաղային անօրէնութիւն, լպիրշ, անառակ են. են.։»

Փարիսեցի՜... այո՛, կեղծաւոր, նենգաւոր փարիսեցին արդեօք ինքը՝ Օտեանը չէ՞։ Ինչո՞ւ չի յիշեր Կ. Արձագանգին Յօդուածագրին ըրած մէջբերումները, այլ կը շատանայ ցուցադրելով միայն այդ քերթուածը ամբողջովին, որուն լոկ մէկ քանի կտապաշտական բացատրութիւնները դատապարտուած էին։ Ինչո՞ւ չի յիշեր սա տողերը.

Բանն դարու քու փրկիչ թող որ այսօր ես յուծեմ,
Ո՛վ Աստուածունիդ Անանիս,
Անաւասիկ քու բագինիդ կրակներուն մէջ նետեցի
Իմ խորտակած խաչափայտս երկու բեւեռը բու-
նաւոր:
Եւ ցնծա՛, դո՛ւն, ո՛վ Ոսկեմայր,
Լուսաւորչի կողերէն ժանտ ոսկոր մը քեզ կը
ծխեմ:

Եւ սրտանք.
Տէ՛ր, մեղկութեամբ սորվեցայ ուրանալ քեզ յաւիտեան...
Բաժակս այսօր ես կը խմեմ քու մահուան...:

Ասոնք անկրօնութիւն չեն ինչ են. ասոնք պժգալի, ամբարիշտ, նիւաղային անօրէնութիւն չեն ինչ են։

Ինչո՞ւ չի յիշեր սա տողերն ալ.
Զունի աշխարհ եկեղեցի ինձ համար...
Ոչ սուրբ պաշտէր, ո՛չ խաչափայտ, ո՛չ Աստուած.
Հոգիս լցուած է անյուսութեան մշուշով...
Ի՞նչ խոստերով ես նզովեմ Արարչին:

Կրնա՞յ ուրանալ այդ Պարոնը թէ՝ յուսահատութիւն է որ հայհոյութիւններ կը ժայթքէ այս տողերուն մէջ։

Կրնա՞յ ուրանալ թէ նոյն Տարեգիրքին՝ Տափանքի, Հաճոյքի, Մերկութեան նուիրուած քերթուածներուն մէջ, զորս չենք կրնար մէջբերել, անբարոյականութիւնը կը խիզախէ իր բոլոր լպիրշ և անառակ խայտառակութիւններով... կրնա՞յ ուրանալ այս ամէնը։

Այո՛... կրնա՛յ ուրանալ... եթէ — ինչպէս դժբախտաբար կ'երեւի — զուրկ է կրօնքէ, բարոյականէ եւ ողջմտութենէ...։

ԵՐ. ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ (*)

Վ. Ա. Ս Ն

յեցին ժամանակիս ազգիս մերոյ հակառակութեան որ ընդ միմեանս վասն Դաւրողիկութեան, եւ յաղագս որոյ յայտնելոյ ումեմն երկրորդ լուսաւորիչ կոչեցելոյ յումեմ, եւ վասն նորին գործոց եւ վարուցն, եւ վասն համաժողովոյ նորին։

Արդ այսօր յայսմ վայրի ի տանէն Աստուծոյ եղ դատաստան առնել և զարմանալի և հատուցանէ հատուցումն ըստ գործոց իւրոց։ Բանզի ալաղակ զլպարտելոցն ի Նմանէ և իւր ամբարտաւանութիւնն եղ առաջի Աստուծոյ, որպէս ասաց Աստուած

(*) Տե՛ս Արձ. Գ. Տարի Թիւ 126 էջ 805։

ընդ Աբրահամ թէ «Աղաղակ Սոդոմացւոց և Գոմորացւոց յաճախեաց և ել առաջի իմ, արդ հաստուցից ասէ այժմ ըստ գործոց իւրեանց»։ Եւ դարձեալ որպէս ասաց առ Մովսէս թէ «Վասն այնորիկ խստացուցի զսիրտս Փարաւոնի պղծոյն, զի ծանուցից, նմա, ասէ, թէ ե՛ս եմ Տէր և ցուցից նմա զզօրութիւն իմ»։ Արդ իբրեւ լցան մեղք Սոդոմացւոցն և Ամօրհացւոցն, ապա զարթեաւ Տէր ասէ սրբագիրն՝ եւ արար զվրէժխնդրութիւն արդարութեամբն իւրով և հատոյց զհատուցումն ըստ չար գործոց նոցա։ Այսպէս եւ այժմ ոչ ժուժեալ երկայնմտութեանն եւ նեղողամտութեանն Աստուծոյ, վասն առաւել ամբարտաւանութեան սոցա, այլ վաղվաղակի կարճեաց եւ արար զվրէժխնդրութիւնս իւր, ցուցանելով նոցա զմեծ եւ զամենակարող զզօրութիւնս իւր տալով. Ա՛վ յիմարեալք եւ կուրացեալք հոգւով, միթէ ո՞չ լուայք յինէ զոր ասացի ցՄովսէս. Ես եմ Աստուած, որ էնն յաւիտենական, Աստուած նախանձոտ, վասն որոյ մի գնիցես զանուն իմ ի վերայ մնոտեաց եւ մի կոչեսցես քեզ Աստուածս մնոտիս որք չեն յերկրի, քանզի նոքա ոչ կարեն փրկել զքեզ ի ձեռաց իմոց։ Արդ սոքա թողին զԱստուածն երկնի եւ երկրի և արարին իւրեանց զԱստուածս զմուփթին զայն Կալնեցին եւ պաշտեցին զնա իբրեւ զԱստուածս եւ յուսացան ի նա. պարծէին անուամբ նորա յեկեղեցիս եւ ի հրապարակս իբրեւ զՔահանայ, զճանճիկ կամ զՓալկոն, եւ նովաւ սկսան ձեռնամուխ լինել ժողովրդեան եւ Աստուծոյ, եւ ոչ միայն ժողովրդեանն, այլ եւ գլուխ կարգեալ պատրիարգաց, եպիսկոպոսաց եւ քահանայից, եւ բուռն հարեալ զնոցանէ մինչեւ ի չնչին աշխարհականսն։ Այլ եւ զձեռս արձակեցին ի մեծամեծ քաղաքս, ի Կ. Պոլիս եւ յԱրիանուպոլիս եւ ի Ս. Երուսաղէմ. եւ ապա ի բոլոր եւ ի բովանդակ Ասիա. զքաղաքս եւ զգեօղս ինքեանք ապռէին[1] և այլոց յաքեղասակել տային զՀօտան Քրիստոսի, ամենեւին ոչ երկն(չ)ելով յԱստուծոյ և ոչ ամաչէին ի մարդկանէ, վասն որոյ կեղէին և լակէին, ուտէին եւ ցրուէին և զմնացեալսն առ ոտն հարկանէին։ Զի թէ ամաչէին արդեօք ի մարդկանէ ապաքէն ոչ զձեռս արձակէին ի նախնիս և ի ծերունիս իւրեանց. քանզի ինքեանք միշտ քարոզելով մեզ խրատեն՝ թէ հլու և հպատակ կացէք հարց և ծերունեաց ձերոց, և մի՛ հակառակ կացջիք նոցա, և ինքեանք այսու օրինօք զոր մեզ քարոզեն յանցաւորք գտան և օրին(ա)զանցք դայթակղեցուցիչք։ Բանզի զտէր Մինաս սրեզերաց վարդապետն Ամթեցի որ շատ աւուրքք գոլով և ծերունի ի ժամանակիս. և էր դասատաեալ Պատրիարք Սրբոյ Սթոռոյն Երուսաղէմի՝ ի տեառնէ Եղիազար Կաթողիկոսէն, արդ ոչ խնայելով յալիս նորա եւ ի չուցեալ զնա յաթոռոյն և եդին ի բանտի. արկեալ զՀղթայս ի պարանոցն և յոտսն զբազում աւուրքք տանջեալ խեղդէին զդրամս պահանջելով ի նմանէ. զի առեալ ի նմանէ՝ չասատուծոյն իւրեանց մատուցցեն։

Նաեւ զտէր Սուքիաս Աստուածաբան վարդապետն որ է աշակերտ Տեառն Եղիազարու դայրապետին, որ սոքա երկոքեանս թուին ինձ թէ իբրեւ լուսապայծառ Հայր երեւին ի մէջ ազգիս մերոյ, քանզի յաւուրս այսոսիկ սոքա են վերապատուք ի տունս Նուանայ, թողում ասել զտունս Արեւելից։ Արդ եթէ սոցա որ զայս գործեցին և ոչ ամաչեցին և պատկառեցին վասն որոյ եւ դու եղբայր այսու ծանիցես եւ զայլսն։ Զի Աւետիք վարդրիկն, օշմարիտ ասեմ, որ նոցա սէյիս՝ առգամ ընել ոչ կարէր։ Արդ լրեալ տեսաստուածն այն քաղցս առգամ զտասիկ գիրս սպառնալեաց գրեաց և յղեաց առ տէր Սուքիաս վարդապետն որ ի Պրուսա, երկեցուցանելով զնա թէ քսակ մի դրամ առաքեա առ մեզ, ապա թէ ոչ իբրեւ զկաթուղիկս բռնութեամբ և թշվառով ածից զքեզ ի դուռն արքունեաց։ Իսկ նա տակաւ գոլով մարմնով և ծերացեալ՝ աղաղակելով գրէր և բողոքէր աղաչելով, թէ «Ես զձեռս իմ յիշխանութիւնս ումեք ո՛չ եմ արձակեալ և ոչ

[1] Ապռել, թալել։

[1] Սախս, Զիապան սպառաւոր։

զքսակ տեսեալ, այլ ըստ իմոյ կարեաց բաւականանամ փոքրիկ քաղաքաւս այս՝ օր ըստ օրէ սպառելով մահուան իմոյ»։ Եւ երբեմն ընծայիւք ինչ չահէր և հաճէր զկամս նորա, բայց նա առեալ զայն, յետ աւուրց դարձեալ սպառնական գրով ահացուցանէր զնա և ոչ տայր նմա հանգստութիւն։ Արդ՝ զի երկարեցից զբանս իմ որ ոչ մարթի ի գրի արկանել, զանպատշաճ զարարմունս նոցին զի թէպէտ ողորմածն Աստուած ողորմելով մեզ ըստ իւրում մեծի ողորմութեան և կարճեաց ժամանակս նոցա ըստ անբաւ զթութեան իւրոյ։ Սակայն զզալրմութիւնս նոցին յաճախս և բազումս զորս արարին ո՞ կարէ թուել. քանզի օր ըստ աւուրց և պահ ի վերայ պահոյ՝ խոկային, հակէին, ճգնէին, մտավարժ լինէին, և զնորագոյն չարիս նիւթեալ յառաջ ածեալ ի վճար հանէին. և այսու ամենայնիւ ոչ յագենային երբէք։ Մի՞թէ ընանիցի՞ երբէք կարաան ծակ ջրով, զի եթէ զբովանդակ ջուրս ծովուն անդ արկանիցես՝ ոչ դադարի և ոչ լնանի. այսպէս և սոքա։ Արդ մեք դարձցուք վերստին ի մնացեալ բանս մեր։ Քանզի տակաւին կայր ի բանտի Աւետիք փաթրիկն ի կլայն եօթնեկի Իզմիրցին այն լցեալ սիրոն չարութեամբ, զորս եհել զթոյնս չարութեանն իւրոյ ի վերայ ազգիս մերոյ և ի վերայ հօտին Քրիստոսի և թաքեաւ և ի փախստեան կայր, և բազումք որոնեցին զնա և ո՛չ գտին։ Վասն զի նա յԵրուսաղէմէ աղքատ և սկլոր եկեալ որ և յանձն իւր զշապիկ ևս ոչ ունէր, և մտեալ առ նա ի բազում չարիս դրդեալ յորդորեաց. ինքն գործէր զչարութիւն և դրդելով զնա տայր նմա ևս գործել, և զբարութիւնս սորա եկեր, և նորին իշխանութեամն զդրամս և զհանդերձս ժողովեալ թանձրացաւ, և յառաջն որ ոչ ունէր զշապիկ մի՝ որ փոխէր յանձնէն զմիւսն, այժմ զրկելով յափշտակելով բռնութեամբ և անիրաւութեամբ ստացաւ իբրեւ զշապիկս յիսուն։ Սմին նման ծանիր և զայլսն որ ոչ ունէր զփող մի՝ յայնժամ, և այժմ վեց եւ եօթն քսակ դրամս մթերեաց. թո՛ղ զպէս պէս մուշտակս, և զչուխայս զանազան, զոր ոչ երբէք էր տեսեալ, աղազուն եւ վտիտն այն Իզմիրցի, իբրեւ զմուկն գողանալով մթերեաց, և ապա այնուհետեւ մտեալ ի ծակ իմն թաքեաւ եւ անտի փախեաւ, վասն այնորիկ Աւետիք փաթրիկն այրեալ տոչորիւր վասն փախստեան նորա։

Ո՛վ կոտալարիչս Իզմիրցի, մինչ Աստուածն քո կենդանի էր և ի փառաւորութեան՝ ի նա յուսացեալ՝ զոր կամէիր առնէիր, և յորժամ մեռաւ Աստուածն քո զիա՞րդ փախեար. և ահա այսու ծանիր զի ոչ ես Քրիստոսեան, այլ ծառայ այնմիկ՝ որոյ զօրութեամն գործէիր զչարիս։ Արդ իբրեւ թագաւորեաց յէտարէնէ նոր թագաւորն Սուլթան Ահմէտ և սպան զաստուածն սոցա, այսինքն Աւետիք փաթրիկն և Իզմիրցուն, այսինքն զկարնեցի մուֆթին՝ յոյժ անարգանօք. և ինքն Աւետիք փաթրիկն դեռ ևս ի կալանս էր ի կլայն եօթնեկի։ Եւ իբրեւ եկին զօրքն եւ նոր թագաւորն Սուլթան Ահմէտ ի Կ. Պոլիս ի Սեպտեմբերի վեց, յաւուրն երկուշաբթի Սուրբ Խաչի պահոցն, և ի նոյն ամսոյն ութ ի տօնի Հրաշափառ Ծննդեան Սրբուհւոյ Տիրամօր Կուսին յաւուր չորեքշաբթի, նորոգեցան երկու պատրիարքութիւնքն գերագահ Աթոռոցն, այսինքն Սուրբ Երուսաղեմի և Կ. Պոլսոյ՝ ի վերայ Տեառն Մինասայ և Տեառն Գալստի Աստուածաբան վարդապետացն, հոգաբարձութեամբ և կամակցութեամբ Կ. Պոլսոյ մեծամեծացն ազգվաթաւորացն։ Բայց զանկեալն ի կլայն եօթնեկի զԱւետիք փաթրիկն շատ ջանացին պանդուխտք և եկք Ստամբոլոյ, որ և մնաց անդ ի բանտին զաւուրս յիսուն և մի, մինչ ի Սեպտեմբերի մեռաւսան յաւուր շաբաթու նաւակատեաց սուրբ Խաչին վերացման տօնի յերեկոյին, և ի մուտս արեւու հանին զնա անտի՝ արկեալ ի պարանոցն պարան, և զձեռս ի յետս կապեալ եդին ի նաւ եւ առաքեցին յաքսորս ի կղզի իմն փոքր, որ կոչի Ավրաս ասաաը, եւ է սակաւամարդ ի մէջ Կիպրոս կղզւոյն եւ Շամտարապօլսոյ[1]. բայց զրսեցիք ոմանք ի լեզու առեալ լցին զքաղաքս թէ եառն խեղդել զնա ի ծովուն, բայց սուտ է այս։

(Շարունակելի)

[1] Թարապլուսը Շամ, Տրիպոլիս (Ասորւոց)։

ԽԱՐԲԵՐԴԻ ՆՈՐԱՇԷՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Դեկտեմբեր 7ի կիրակին էր, ցուրտ ու մշուշապատ օդ մը կը խածատէր անցորդներու դէմքերը, շրջակայ բարձրագագաթ լեռներու կատարները և ընդարձակ դաշտերն ու տափաստանները, ձիւնի ճերմակ սաւանով մը ծածկուած էին, ձմեռն իր ամբողջ արհաւիրքներով ու տառապանքներու ծրարով՝ արշաւած էր ամէնուրեք հաւասարապէս։

Հակառակ այս մելամաղձոտ վայրկեաններուն, տակաւին գիշերային աղջամուղջը կը տիրապետէր, և ահա կամացուկ սկսաւ առաւօտեան աղօթարանը բացուիլ, արեւելքի կողմէն խաւարապատ ու աղօտ լուսոյ ճառագայթներ սկսան բոցավառիլ և լուսաճաճանչ արեգին գալուստը աւետել։ Այս պահուն Տեղւոյս Հայ կաթողիկէ Համայնքին Նորաշէն եկեղեցւոյ՝ երկնաճեմ ու երկնաբարձ աշտարակին ծոցէն լսուած բարձրագոռ զանգակին ղօղանջումը հաւատացեալները եկեղեցի կը հրաւիրէր, որոնք կիսամեայ շրջան մը՝ կրօնական սրբազան արարողութիւններէ և եկեղեցական պաշտամունքէ բոլորովին զուրկ մնացած էին, այս անգամ արտակարգ խրախճանութեամբ կը շտապէին դէպի նորակառոյց սրբավայրը. հոն՝ այդ փառաշուք եկեղեցւոյն մէջ հանդիսաւոր բանալու օրուան ուշագրաւ օծման արարողութիւններուն և Հայրապետական Ս. Պատարագին։

Արդարեւ հիասքանչ ու զարմանալի տպաւորութիւններու տակ գտնուեցանք, երբ նախկին խարխուլ ու կիսաւեր եկեղեցին մեր մտաց մէջ արթնցուցինք, ապա մեր առջեւ նշմարեցինք խիստ զարդարուն և հոյակապ սրբավայր մը, որուն լրացումը միակ ու միակ Որհի. Վիճակաւորին խորիմաստ գրչին արտադրոյթներով և Գեր. Վարդապետաց մեղուանման աշխատութիւններու շնորհիւ կատարելապէս իր վախճանին հասաւ և Խարբերդի կաթողիկէ ժողովուրդը խորին երախտագիտական զգացումներու բեռան տակ թողուց։

Նորածագ արշալոյսին հետ արթնցող երկսեռ բազմութիւն մը հետզհետէ կը ծովանար, դեռատի ու մատղաշ մանուկներ՝ ծիծաղկոտ կը փութային դէպի աղօթավայրը՝ իրենց մանկական պարտաւորութիւնները անթերի կատարելու. հաւատացեալներու ամբոխը կը ստուարանար, ժողովրդային մեծ իրարանցում մը կար. ամիսներէ ի վեր թափուր մնացած առաջնորդարանի շրջափակը՝ այս անգամ երկսեռ հոծ բազմութիւն մը խուռներամ լեցուած էր, ներսը եկեղեցական արտաքրու արարողութիւններու մինչցին՝ հաւատացեալներ, միաւորտ սրբազան խորանին առջեւ հաւատքի ու կրօնական սուրբ զգացումներով ակնածուն, ծխացող բուրվառին հետ իրենց աղօթքի մրմունջները ամպածրար եթերի բարձունքներէն վեր դէպի երկինք կը բարձրացնէին ու անխնայ օգնող, հոգեւորին աշխատող, բարեացակամ ու ժողովրդասէր Վիճակաւորին երջանկութեան համար խնդրանքներ կը մատուցանէին։

Բացայայտ ու ակներեւ ճշմարտութիւն մըն է ըսել թէ, Խարբերդի Հայ Կաթ. ժողովուրդը, ինչպէս նաեւ բոլոր կրօնապետները, հաւատքի զօրեղ զգացումներով տոգորուած են. կրօնքը՝ ամէն դասակարգի բնակարաններու մէջ կը տիրապետէ, կրօնքը՝ իր բոլոր սրբազան կիրառութիւններով արմատացած է իւրաքանչիւրին սրտին մէջ, և այդ հաւատքին օժանդակութեամբ ամէն ոք կը դիմէ դէպի ապագայ վերածնութիւն։

Օծման արարողութիւնները, ինչպէս նաեւ Հայրապետական Ս. Պատարագը՝ կանոնաւոր երգեցիկ խումբի մը կողմանէ լրացաւ, այնպէս որ շատեր ափ ի բերան հիացած էին ուսանողներու այդքան վարժ ու ներդաշնակ երգեցողութիւններուն, և մանաւանդ գնահատելի շնորհակալութիւններ յայտնեցին դպրոցական վարիչ մարմիններուն։

Պատարագի միջոցին Արհ. Ստեփան Գերապայծառը, կարճ ու հակիրճ բանախօսութեամբ մը պարզեց եկեղեցւոյ վերաշինութեան մասին իր կրած նիւթական անձուկ պարագաները. մասնաւոր շնորհակալութիւններ յայտնեց Օսմ. Վեհափառ կայսեր, և Ս. Քահանայապետ Պիոս Ժ.ին՝ որ, միոյն թոյլատրութեամբ և միւսին 5000 ֆրանքի դրամական օժանդակութեամբ՝ եկեղեցին իր շինութեան մեծ բաժինը արդէն գտած էր։

Սոյն սրբազան արարողութիւններու լրացումէն վերջ՝ Արհ. վիճակաւորը զգեստաւորուած «Ուրախ լերուք» ներդաշնակ երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Առաջնորդարան, հետզհետէ բազմութիւնը կը ծովանար սրահին մէջ, այս անգամ մասնաւորապէս Արհ. Եպիսկոպոսին առջեւ բանալու իրենց սրտերուն մէջ թաքնուած ու մթերուած շնորհակալութեան անեղծ զգացումները։

Այսպիսի խորհրդաւոր պարագայի մը՝ ուսանողներու կողմանէ լսուեցաւ օրուան հանդէսին պատշաճ երգ մը, ապա դպրոցի ուսուցիչներէն մին՝ ամբողջ երկսեռ հասարակութեան կողմանէ Արհ. Գերապայծառին ուղղեալ ճառ մը արտասանեց, ուր մասնաւորապէս ցոյց տրուեցաւ թէ Խարբերդի Կ. ժողովուրդը, սոյն փառաշուք եկեղեցին և անոր խորանին վերայէն բարձրացող երկնաճեմ աշտարակը, միակ ու միակ իր կրօնապետին մեղուանման աշխատութիւններուն կը պարտի։

Վերոյիշեալ ճառին աւարտուն „եպոյ՝ վարդապետներու էն կրտսերը, համառօտ ու խորհրդաւոր բանախօսութիւնով մը ցոյց տուաւ կրօնքի վեհութիւնը, եկեղեցւոյ սրբութիւնը և մաղթեց որ Նորին Սրբութիւնը բոլոր քահանայ եղբայրներու հետ միաբանաբար կարենայ հաւատացեալներու սրտերն ալ տաճարացնել և յաւիտենական երանութեան ժառանգորդներ պատրաստել։

Կէս օրը բաւական անցած էր, Առաջնորդարան ծովացած բազմութիւնը սուգ վերաբերումներով վերադարձաւ դէպի տուն, իր առջեւ ունենալով գեղեցկակերտ ու բարձրաճեմ կոթողը։

ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Մ. Ազիզ, 1913 Դեկտ. 12 (Ն. Տ.)

ԼՈՒԻ ՎԷՕՅԵՕՅԻ ՆԵՐԲՈՂԸ (*)

(Շար.)

Բայց ահա՛ նա կը խորհի այլեւս ոչ թէ ի՛նչ որ կ՚ընեն ուրիշները, այլ ինչ որ են։ Այնչափ գիրկընդխառն կռիւներու մէջ վայրապար չէ դիտած անոնց դէմքը, անոնց հոգին. զանոնք կը ճանչնայ։ Ի՞նչ են...։ Ի՞նչ գիտեն...։ Ի՞նչ նպատակներու հետամուտ են...։ Ի՞նչ կիրքերէ կը տանջուին...։ Կարելի չէ սխալիլ։ Եւ այն ատեն կը զգայ իր մէջ երկրորդ ահաւոր զգացում մը զոր պէտք չէ շռայլել, ինչպէս չի շռայլուիր դիւցազնական օղիչկ մը. արհամարհանքը։ «Թէեւ այնչափ չեմ սիրեր այս դարը, ուր կ՚ապրիմ, կը գրէ նա, իմ վրաս կը գտնեմ անոր շատ մը հանգամանքները, յատկապէս այն որ ես կը դատապարտեմ ամէ՛նէն աւելի. կ՚արհամարհեմ։ Ատելութիւնը մուտ չէ գտած սրտիմէջ, բայց արհամարհանքը չի կրնար անկէ ելլել։ Հոն կառուեր կառչեր է. պտուտկամնդուեր է, ինչ ալ ընեմ տեղի չի տար, կ՚աճի կ՚առաւելու երբ ջանամ զինք ջնջելու։»

Օ՛ն, Յիսուսի Քրիստոսի զինուո՛ր, պէտք է սակայն յաջողիլ այդ բանին մէջ։ Պէտք է ելլել վերանալ մինչեւ այն բարձրութիւնները, ուր առաքեալն ու զինուորը իրարու կը հպին. մինչեւ սէրը։ Եւ, իրօք, Լուի կը վերակենդանացնէ իր սիրտը. «Մարդիկ ստուգիւ իմ եղբայրներս են, զանոնք կը սիրեմ եւ անոնց վրայ կը ցաւիմ. եւ մտքէս իսկ պիտի չանցընէի անոնցմէ մէկն անգամ ամբաստանելու, եթէ չյուսայի այնպէսով ծառայել ուրիշ ամէնուն եւ նոյն իսկ անոր։»

Հոս, ինչպէս այլուր, անընդհատ մտահոգութիւններ ու նեղութիւններ միայն կրնայ ծնանիլ զգացումը։ Վէօյեօ ընդհանուր օրէնքէն ազատ պիտի չըլլայ։ Պէտք է որ դիտէ, զննէ մեծ ու փոքր թերթերը, հրապարակախօսութեան բեմերը, խաղավայրերը, սրճարանները, հանդէսները, ամպիոնները, ճեմարանները, դատարանները, վարժանոցները, դիւանները, խորհրդարանները, գահերը. Ֆրանսա, Իտալիա, Գերմանիա, Պոլոնիա, Ռուսիա, Ամերիկա, Բարիզ, Պէռլին, Ֆլորանս, Բէքին. մօտը, հեռուն. պէտք է որ լսէ ամէն զոհի հեծեծանքը, ամէն դահիճի լուտանքը. պէտք է որ գտնուի ամէն խրամի առջեւ, դիմապահը մէկ դի, սուրը բարձր, հարստահարին դիմաց. պէտք է որ նմանի բախտով՝ կամուրջի մը գլուխը առանձին պաշտպանող Պայառին. խոր ճամբայ մը փակող Մեծ Ֆէրէին. պէտք է որ կարէ Վոլդէրի ճանկերը, աշխարհի ամէն մարդիկներէն աւելի նախատուի, սպառնալիքի տակ տեսնէ իր գոյութեան միջոցները, տուգանուի, բանտարկուի, միանգամ դադրած տեսնէ իր Լրագիրը, երկու անգամ ընդհատուած, պէտք է որ պահէ Իւնիվէռը իր սիրելի սեղակալ Էօժէնին հետ ամբողջ քառասուն տարի, անոր մէջ խմբագրէ յիսուն խոշոր հատորի բովանդակութեան չափ յօդուածներ. յօրինէ, նոյն միջոցներուն, պայքարաթերթեր, քրիստոնէական վէպեր, արձակ եւ ոտանաւոր երգիծական գրուածքներ, բազմաթիւ հատորներ թղթակցութեան, պատմութեան, ուղեւորութեանց, մտածութեանց, սուրբերու եւ մեր Տիրոջ կենսագրութեանց. եւ միշտ եւ ամէն էջի մէջ, Մոնդոց ահաւոր մարտիկին պէս, ձեռք վերցնէ ամէնուն դէմ, որովհետեւ ամէնքը Քրիստոսի եւ Քրիստոսի անձնանուէրներուն դէմ ձեռք կը վերցնեն. հաւատարիմ Որիգինէսի՝ մտքի արգաւանդութեամբ, Տերտուղիանոսի՝ ջատագովական կորովով, ամենէն վստահելի աստուածաբաններուն՝ վարդապետական ճշգրտութեամբ։

Այս կաթողիկէ մատենագրի բազմաշխատ, տաժանելի արուեստին մէջ կիսովին պիտի կորսնցնէ իր աչքերը եւ պիտի մատնուի անդամալուծութեան. բայց երբ իրիկունը հասնի, այն մեծ իրիկունը, դէպի ուր ամէն մարդ կը

(*) Տես Արձ. Գ. Տարի Թիւ 126, էջ 847։

դիմէ, իրաւունք եւ պարտք պիտի ունենայ շնորհակալ ըլլալու Աստուծոյ իրեն յանձնուած մեծ պաշտօնին համար որ է մեր կաթողիկէ մամուլին ոգեւորութիւն եւ որոշ ուղղութիւն տալ. անոր բանալ աղբիւր մը, ուրկէ ըմպեն խղճի ապահովութեամբ եւ ուրախութեամբ անոնք որ պիտի նուիրուին պարկեշտ եւ միանգամայն քրիստոնէական լրագրութեան. վերջապէս պաշտպանել այն նեղ և միշտ սպառնալիքի ենթարկուած բանակատեղիները, ուր կ'ապաստանին հաւատացեալները, ժողովրդապետները, եպիսկոպոսները, Յիսուսի Քրիստոսի Փոխանորդին, Մեր Ս. Հօր, Քահանայապետին հրամատարութեան տակ։

Այսպիսի ծրագիր մը այն անգամ մեր դարուն մէջ տեսնուեցաւ, Տէարք. և այն անգամ միայն։ «Հիմա որ ջերմեռանդ ես, ի՞նչ պիտի ընես, կը հարցնէր Պիւկօ, քիչ մը մտահոգութեամբ, Վէօյեօյի. ի՞նչ պիտի ընես».—«Զօրավա՛ր, յեղափոխութիւն մը»։

Այս արտաքոյ կարգի արտայայտութիւնը, հրձիգ զինուորի մը հարուածն եղաւ։ Անդին կայ ռազմավարութեան գործը. ճակատամարտները։

Անոնց երեքը գլխաւորաբար նկատի պիտի առնունք. իր ամէն առենուան պատերազմը ընդդէմ ազատամոլութեան. իր եօթնամեայ պատերազմը՝ երկրորդական ուսուցման ազատութեան համար. իր հնգետասնամեայ պատերազմը՝ Հռոմի Քահանայապետին առանձնաշնորհութիւններուն համար։

Ազատամոլութեան դէմ։— Անիկայ երբէք չըմբռնեց երկու ընկերութիւնները, եկեղեցականն ու քաղաքականը, իբրեւ պարզապէս իրարու համակարգեալ (coordonné), երբեք չսահմանափակեց պարզապէս ուղիղ իշխանութեան մը մէջ՝ այն անուղղակի իրաւասութիւնը, զոր Եկեղեցին իրաւունք ունի բանեցնելու ժամանակաւոր խնդիրներու մէջ, երբ ասոնք գերբնական կողմ մը ունին։ Յստակօրէն տեսաւ թէ ընկերութեան աշխարհականացումը Պետական անաստուածութիւն է։ Հասկցաւ թէ ճշմարտութիւնը ազատութեան հիմն է. թէ մոլորութիւնը եւ ստութիւնը բնաւ իրաւունք չունին այս տեղ. թէ կրօնքի հանդէպ Թշնամի կամ անտարբեր կառավարութիւնները իրենք իրենցմէ կը քայքայուին։ Նաբոլէոն Գ.ի սա խօսքերը ծափահարեց. Կ'ուզեմ կրօնքի, բարոյականի, անդորրութեան գիրկը առաջնորդել, ժողովրդեան այն մասը, որ, հաւատացեալ տէրութեան մը մէջ, հազիւ ծանօթ է Քրիստոսի պատուէրներուն, որ աշխարհի ամէնէն արգաւանդ երկրին մէջ, հազիւ անոր ամենակարեւոր բերքերը կրնայ վայելել:

Ինք կը համարէր թէ վարդապետութիւնն ու իրերու բնոյթն իսկ կը պահանջեն այս ծրագրին քրիստոնէական դրոշմը. և երբ 1853ի ժողովրդական ընտրելին լքեց նոյնը Դիւիլըրիի ժողովներուն մէջ մասամբ, ապա վերջնապէս՝ Արեւելքի արիւնոտ դաշտերուն մէջ, նոյնը գտնելով Շամպոռի կոմսին դրչին տակ, յարեցաւ Թագաւորներու ուղւոյն, ինչպէս յարած էր կայսեր եղբօրորդւոյն։ Խաչի յաղթանակն էր իր բովանդակ քաղաքականութիւնը. Խաչն է քաղաքագիտութիւն մեր: (Պիոս Ժ.)

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԻ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

,,ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ'' ԳՐՔԷՆ

Դիրք Ա.—Գլ. ԺԸ. — Ս. Հարց օրինակներուն վրայ։

Մտադրութեամբ զննէ՛ Ս. Հայրերու կենդանի օրինակները, որոնց մէջ փայլեցաւ ճշմարիտ կատարելութիւն եւ բարեպաշտութիւն, ու պիտի տեսնես թէ ո՛րչափ փոքր է, եւ գրեթէ ոչինչ, ինչ որ մենք կ'ընենք:

Աւա՜ղ, ի՞նչ է մեր կեանքը, երբ անոնց համեմատուելու ըլլայ:

Քրիստոսի սուրբերն ու բարեկամները՝ Տիրոջ ծառայեցին անօթութեան ու ծարաւի մէջ, ցուրտի ու մերկութեան մէջ, աշխատութեան ու յոգնութեան մէջ, հսկումներու ու պահեցողութեանց մէջ, աղօթից ու սուրբ մտածութեանց մէջ, հալածանքներու ու պէսպէս նախատինքներու մէջ:

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԻՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

(Շար.)

Հոգեգալուստեն վերջը, 401, Յունիս 20ին Ս Հայրապետին քարոզ եկաւ Պատրիկիոս տրքուանի նստաւ, և Արկադիոս կայսեր կողմէ անոր ըսաւ. Ս. Կակիոս, Անտիոքոս, Սեւերիանոս և Կիտինոս եպիսկոպոսները ինծի ըսին թէ՝ Յովհաննու անկումը մեր վիրը թող բլլայ. որպէս Աստուծոյ յանձնուելով և՛ եկեղեցիէն և քաղքէն։ Ս Հայրապետը՝ Կայսեր այս պատգամը լսելուն պէս, Աստուծոյ գոհութիւն մատոյց, և արտասուներեն ա քով քովի եպիսկոպոսներուն և քահանաներուն հոգածէշտ ողջոյն տալով, յանձնուեցաւ կառավարութենէն դրկուած մարդոց, որոնք զինքը կապեցին և փոքրիկ նաւակ մը դրին երկու ընկերով, և պատուիրեցին որ փութով անցընեն զինքը Նիկիա, և անկէ տանին որոշուած աքսորավայրը, որպէսզի ժողովուրդը այլեւս չյուսայ զինքը վերադարձնել։

Եւ նոյն օրն իսկ Աստուած պատուհասեց քաղաքը. որովհետեւ յանկարծ եկեղեցւոյ մէջ հրդեհ ծագեցաւ, և զայն այրելէն յետոյ անցաւ պալատը և մոխիր դարձուց գիմացի Սինկղիտոսին տարանքը։ Հրդեհին պատասխանատուութիւնը իրարու վրայ կը ձգէին Ոսկեբերանին թշնամիներն ու բարեկամները։ Բայց Պալադիոս կը գրէ թէ՝ ի նշան Աստուծոյ բարկութեան յանկարծակի բոց ելաւ այն տաճարէն ուր Ս Հայրապետը կը նստէր, և այրեց երեք ժամուան մէջ եկեղեցին և ծերակոյտին տարանքը։

Բայց զարմանալին այն է որ՝ Ոսկեբերան Բիւթանիա հասնելուն պէս այս հրդեհին լուրն ալ հասաւ, և Ոսկեբերան ու իր հետի ընկերները յանցաւոր նկատուեցան։ Ուստի զինուորները սկսան Սուրբին սպառնալիքներ ընել, և անոր երկու ընկերները կապուած Պոլիս դարձուցին դատուելու համար, որպէս յետոյ անպարտ գտնուելով ազատ արձակուեցան։ Ոսկեբերան ուզեց այս մասին իր թշնամիներուն նամակ մը գրել, բայց զինք տանող զինուորները թոյլ չտուին և գիշեր գորեկ զինքը քալեցնելով կը ջանային օր առաջ հասցնել իր հեռաւոր աքսորավայրը, Փոքր-Հայոց Կոկիսոն աւանը։

Այս միջոցին Հռոմի Իննովկենտիոս Քահանայապետը և Մնորիոս Կայսրը լսելով այս եղածները, Արկադիոսի և Պոլսոյ կղերին նամակներ գրեցին ջատագովելով Ոսկեբերանը և մեղադրելով անոր հակառակորդները։ Ոսկեբերանի աշակերտը, Նեղոս Աբբան ալ թուղթ գրեց Արկադիոսի՝ յայտնելով թէ նոյն ատենուան բոլոր պատիժները Աստուծոյ բարկութեան նշաններն են։ Բայց ամէնքը իբրեւ յայտնի պատուհաս նկատեցին՝ նոյն տարւոյն Սեպտեմբերին վերջին օրը տեղացած տարօրինակ կարկուտը և անկէ չորս օր վերջը Եւդոքսիա թագուհւոյն մահը։

Իսկ Ս. Հայրապետը ուրախ սրտով կը շարունակէր իր աքսորքի ճամբան, և ուր որ ինչեւանէր քարոզութիւններ կ'ունէր և նամակներ կը գրէր, որոնց մէջ ակներեւ կը փայլին իր սրանդի համբերութիւնը, ներողամտութիւնը համակամութիւնը։ Իր պատճառաւ Պոլիս բանտարկուած եպիսկոպոսներուն և քահանաներուն այ թղթեր գրեց որոնց մէջ կը պատմէ իր եօթանասնօրեայ ուղեւորութիւնը, կրած նեղութիւնը, Գալատիայէն, Կապադովկիայէն անցնելու ատեն հիւանդանալը, անընդհատ և սաստիկ տենդէ մը բռնուիլը, Կեսարիայէն անցնելէն յետոյ երկրին բնակիչներուն յատկապէս Հայոց կողմէ գտած կարեկցութիւնը, սերը, վերջապէս Կոկիսոն հասնելով հանգստանալը։ Իր նամակներուն մէջ կը կրկնէ սա խօսքը. Փա՛ռք Աստուծոյ ամէն բանի համար, որմէ առնուած կը համարուի եկեղեցւոյ սա մտքանքը. Փա՛ռք թեզ, Տէ՛ր, փա՛ռք թեզ, յաղագս ամենայնի, Տէ՛ր, փա՛ռք թեզ։

Կոկիսոնէն Ս. Հայրապետը նորէն նամակներ գրեց շատերուն. հոն եկան նաեւ իր բարեկամներէն ոմանք, և կը ջանային, իր պահպանները համոզելով, այն անշուք և աղքատին աւանէն զինքը ուրիշ աւելի լաւ տեղ մը փոխադրելու։ Բայց Սուրբը գոհ էր այն տեղէն և չէր ուզեր այլուր երթայ, մանաւանդ որ տեղւոյն հայ բնակիչներն ալ կը սիրէին զինքը իրենց եպիսկոպոսին հետ որ կը կոչուէր Եղբայր, ըստ յունաց Ատելբոս և սուրբին տասնջականն էր։ Դիսկորոս անունով ուրիշ հայ եպիսկոպոս մըն ալ, որ Լուսաւորչի տոհմէն էր, Ոսկեբերանին հետ մտերմութեամբ կապուեցաւ։ Այս եպիսկոպոսին, ինչպէս նաեւ տեղւոյն ժողովրդեան, խնդրանքով Ոսկեբերան Ս. Գ. Լուսաւորչի վրայ աքանչելի ներբող մը խօսեցաւ անոր տօնին օրը։ 405ի սկիզբները հիւանդացաւ Երանելին բայց գարնան դարձեալ առողջացաւ և դարձեալ քարոզել և գրել սկսաւ։ (Շարունակելի

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Մ. ՇԱՄԲԻՈՆԻԷՆ Տոքդորին մասին, որ վերջերս մեռաւ, մեծ անձնաւորութիւն մը հետեւեալը կը պատմէ.

«Օր մը կը շնորհաւորէի այն մեծ յաջողութիւնը որով վիրաբուժական գործողութիւններ կը կատարէր։

«— Կարելի է, պատասխանեց, որ իմ անձնական ճարտարութիւնս այս բանիս մէջ ազդեցութիւն մը ունենայ։ Բայց ուրիշ բան մը կայ. ես երբէք չեմ գործածեր նշդրակս առանց նախ Հայր մեր եւ Ողջոյն թեզ ըսելու»։

ԲԱՍԴԷՕՐԻ հաստատութեան բակին մէջ

կը բարձրանայ մարմարէ յուզիչ յիշատակարան մը, որ կը ներկայացնէ կատղած շան մը հետ կռուող բոկոտն գիւղացի մը։

Դռնապանը, երբ իրմէ խնդրուի, միամտօրէն կը բացատրէ այդ յիշատակարանին նշանակութիւնը։ Կատղած շուն մը կը խածնէ օր մը Ժիւբիլ անունով փոքր հովիւ մը, և կը սկսի յարձակիլ փոքրիկ տղոց խումբի մը վրայ։ Ժիւբիլ աս որ կը տեսնէ կը խոյանայ կատղած շան վրայ և զայն գետին կը տապալէ։

Ժիւբիլ Բարիզ կը ղրկուի, և հոն կ'ենթարկուի կատաղութեան դարմանին, զոր Փասդէօր նոր գտած էր։ Բասդէօրին պատուաստած առաջին հիւանդը ինքը կ'ըլլայ։ Մատաղատի հովուին վէրքը թէեւ ութօրեայ էր, սակայն մեծ արուեստագէտը յաջողեցաւ զայն լիովին բուժել և ակներեւ ցոյց տալ իր գիւտին իրական զօրութիւնը։

Պատուական դռնապանը կ'աւելցնէ նաեւ, եթէ իրեն հարցուի, որ Ժիւբիլը հիմա ողջ առողջ է — եւ ինք լաւ գիտէ — որովհետեւ Ժիւբիլը ինքն է։

ՁԳԱՁՈՒՄ ԵՒ ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ. — Ահա Անգլիացի դատապարտեալ մը, որ իր գործած յանցանքով չէ մթագնած իր մտքին արդարութեան ծանօթութիւնը եւ չէ նուաղեցուցած իր սրտին զղջման զգացումը։

Սամուէլ Պօքէր գողութեան համար բռնուեցաւ, դատուեցաւ եւ միամեայ տաժանակիր աշխատութեան դատապարտուեցաւ։ Դատապարտեալը բողոքեց։ Բայց ինչո՞ւ համար. արդեօք պատիժին թեթեւացման համար։ Ո՛չ երբէք։ Սամուէլ Պօքէր կը խնդրէ որ իր պատիժը հինգ տարիի բարձրացնեն. որովհետեւ ինք կը փափաքի վերականգնիլ, պարկեշտ եւ բարի մարդ մը ըլլալ, և կը կարծէ թէ մէկ տարին քիչ է այս իր վերականգնումին իրականացման համար։

ՖՐԱՆՍԱՅԻ մէկ քաղքին մէջ փոքրիկ աղջկան մը մասին արտաքոյ կարգի իրողութիւն մը կը պատմուի, որ անգիտակցական ինքնազդումի (autosuggestion) երեւոյթ մըն է։

Վարժուհին, քաղաքապետը, ժողովրդապետը հաւաստեր են որ երբ աղջիկը կը խորհէր խնդրի մը, բառի մը ուղղագրութեան մասին, լուծումը կը գրուէր իր մորթին մէկ մասին վրայ՝ դուրս ցցուած սպիտակ գիրերով, վաղանցուկ կարմրութեան մը մէջէն։

Երբ օր մը կը դիտէր վերէն անցնող սաւառնակ մը, քովը եղողները տեսան որ այդ սաւառնակը անոր սրունքին վրայ նկարուեցաւ։

Գիտութիւնը արդէն արձանագրած է այս կարգի դէպքեր՝ ջղայիններու վրայ, որոնց ծայրայեղ զգայնոտութիւնը շատ դժուարաւ կը բուժուի։

ՎԻՔԹՈՐ ՀԻՒԿՈՅԻ ՄԷԿ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ. — Վիքթոր Հիւկօ Ազգ. Ժողովին առջեւ խօսելով, արտասանեց հետեւեալ նշանաւոր խօսքերը։

«Մենք ամէնքնիս, ով որ ալ ըլլանք, պարտական ենք ընկերական ամէն գործունէութիւն, ամէն ձեւերու տակ, ցոյց տալ, սպառել, չխնայել՝ թշուառութիւնը ջնջելու համար. և միեւնոյն ժամանակ բարձրացնել ամէն գլուխները դէպ ի երկինք, ուղղել բոլոր հոգիները, դարձնել բոլոր սպասումները դէպ ի յաւիտենական կեանք մը, ուր բարիքը պիտի վարձատրուի եւ չարիքը պիտի պատժուի։ Ըսենք բարձրագլուխ. ոչ ոք յանիրաւի կամ առանց օգուտի տառապած պիտի ըլլայ։ Նիւթական աշխարհի օրէնքն է հաւասարակշռութիւն, բարոյական աշխարհի օրէնքն է արդարութիւն։ Աստուած կը գտնուի ամէն բանի ծայրը։ Չմոռնանք զայս. ամէնուն սորվեցնենք զայս. չ'արժեր ապրիլ, եթէ իսպառ պիտի մեռնինք։ Այն որ կը թեթեւցնէ յոգնութիւնը, կը նուիրագործէ աշխատանքը, մարդը կ'ընէ հզօր, լաւ, իմաստուն, համբերող, բարեացակամ, արդար, միանգամայն խոնարհ եւ մեծ, արժանի իմացականութեան, արժանի ազատութեան, նըկատումն է լաւագոյն աշխարհի մը, որ կը ճառագայթէ այս կեանքին աղջամուղջին մէջէն։

Ինծի գալով, որովհետեւ դէպքը կը բերէ

որ արտայայտուիմ. կը յայտարարեմ այս բեմին բարձունքէն, ես կը հաւատամ հաստատապէս այն գերագոյն աշխարհին. ան ինծի համար շատ աւելի իրական է քան այս ողորմելի մղձաւանջը զոր կը լափենք եւ կեանք կ'անուանենք. կը հաւատամ անոր համոզումիս բովանդակ ուժերով, եւ երկար պայքարէ, շատ ուսումնասիրութիւններէ եւ փորձերէ վերջը, ան իմ մտքիս գերագանց ստուգութիւնն է, ինչպէս նաեւ հոգւոյս գերագոյն սփոփանքը։»

ՀԻՒՍՆԻ ԻՆԹԻԽԱՊ

(Տեվամի)

«Ֆագաթ, սէվկիլի Անաթօլըմ, իսթէրսէն բէք օ գատար ուզագա պագմայալըմ։ Հէր նէ տէ օլսա, օղլունի երիմի եաշաեաճագ օլուրսա, օ վագըթ հէր չէյ մէյտանտա չըգաճագ վէ հագիգաթ անլաշըլաճագ տըր։

«Հէլէ չիմտիլի, սէնին եաշայաճաղըն հալը հագըրը տիւշիւն, իլէրիսի իչին Ալլահ քէրիմ տիր։»

«Պու կիւն Արման եէտի եաշընտա տըր, քէնտինէ սէօյլէնիլէն հէր չէյի անլայապիլիյօր, տէյի՞լ մի։»

«Իշթէ օնունճը Պիտս Բաբանըն գարարը մուսիպի իւզրէ, օղլուն պու սէնէ զարֆընտա իլք հաղորդութիւն ալաճագ տըր, էօյլէ տէյի՞լ մի։

«Էվվէթ, պիր չօճուգ, օ պէյազ նշխարքըն իչինտէ, Ամենասուրբ Երրորդութիւնըն իքինճի Անձը, պիզիմ իչուն խաչն օլմուշ օլան էօյչիւսիւզ, հէր չէյէ գատիր Ալլահ Յիսուս Քրիստոսըն մէվճուտ պուլընտուղընը անլայաճագ օլուրսա, հաղորդութիւնա եագլաշապիլիր։»

«Պազ իմտի, օղլունը աշխարհական մէքթէպինէ գօմագլըղընտաքի զարիպ միւպահէնէթի հիչ տիւշիւնմիւշմիսին։»

«Սէն վէ վալիտէսի, էվտէ չալըշաճագսընըզ քի Արմանը էյի պիր իլք հաղորդութիւն ալմայա հազըրլայասընըզ. չիւնքի սէն տէ, վալիտէսի տէ օղլունըն եաշընտա պուլընանլարըն Սրբութիւն ալտըղլարընտա, Արմանըն տա օնլար իլէ պէրապէր հայաթ աֆրատընա եագլաշմասընը արզու իտէրսինիզ։

«Պինաէն ալէյհ, սիզ, Յիսուս էֆէնտիմիզտէն, օնուն պիզէ օլան պէօյիւք մէհապպէթինտէն, օնուն հայաթընտան վէ չարչարանքլարընտան պահս իթտիյինիզ վագըթ, պու վագալարը, պէշէրիյէթէ թէալլուգ իտէն էն մուհիմ պիր մէսէլէ կիպի սէօյլէյէճէքսինիզ։

«Կէլ կէօրէլիմ քի, մէքթէպտէ պու պէօյիւք մէսէլէյէ տաիր գաթիէն հիչ պիր չէյ իշիթմէյէճէք տիր... տիւնեայը խէլաս իտէն Յիսուս Քրիստոսուն իսմի պիլէ զիքր օլունմայաճագ... Ալլահըն իսմինի տույմայաճագ վէ օնուն՝ հէր չէյին սահիպի օլտուղընը քէնտիսինէ քիմսէ էօյրէթմէյէճէք տիր։

«Էվտէ վալիտէսի, չօճուղըն էլլէրինի գավուշտուրարագ օնա՝ եիւզիւնէ խաչ չըգարմայը, հէր չէյի տուա իլէ Թագտիս իթմէյի էօյրէթէճէք։

«Մէքթէպտէ իսէ, եիւզիւնէ խաչ չըգարմագ եօգ... տուա եօգ... կիւնլէր՝ Ալլահըն իսմինի զիքր իթմէքսիզին կէչէճէքլէր...։ Պու գատարը տա քեաֆի տէյիլ իմիշ կիպի, մուալլիմ, տուա իտէնլէրի իսթիհզա իտէճէք, օնլարը ահմագ վէ պուտալա թէսմիյէ էյլէյէճէք տիր։

«Էվտէ վալիտէսի օնա խաչելութիւնը կէօսթէրէճէք, վէ էյի էվլէրին քեաֆֆէսինտէ պիր խաչելութիւն պուլունուր, տէյէճէք։

«Մէքթէպտէ իսէ, չօճուգ խաչելութիւնըն զալտըղընը վէ եէրինին պօշ գալտըղընը կէօրէճէք։

«Պիր թարաֆտան սէն օղլունա էյի ֆիքիրլէր, եիւքսէք ֆիքիրլէր, քըյմեթտար ֆիքիրլէր թէլգին իթմէյի իսթէյէճէքսին. օ պիր թարաֆտան տա օնա՝ պուննա մուխալիֆ ֆիքիրլէր վէրիլէճէք. չէօյլէ քի չօճուգ լաղըմ օլտուղու կիպի վէ սէնին արզուն իւզրէ սաֆլըղլը, սատէլիքլէ, Թէսլիմիյէթլէ իլք հաղորդութիւնը ալամայաճագ տըր։

«Չօճուղըն րուհը իւզէրինէ իճրա իտիլէն եէկիտիկէրինէ մուխալիֆ պու իքի թազյիգ, էվվէլ էմրտէ հիչ պիր թէէսիր կէօսթէրմէ-

յէճէք, սայքը հիչ մէսալէսինտէ օլաճագ։

«Եագամտա էն ուֆագ պիր տէրէճէտէ պիլէ օնա տօգունմագտան զայէթ սագընմալըտըն, չիւնքի Սիւլլի Բրիւտօմըն վազօսը հագգընտա անէնիլտիյի կիպի օղլումըն րուհը, գալպի հագգընտա տախի,

Զաքլագ տըր, սօգունմայըն աման օնու, տէնիլէ պիլիր։

«Մա մաֆիյհ, խաթէր խաթէմէզ կիւնիւն պիրինտէ պիր թէսատիւֆ օլաճագ վէ չաթլագ մէյտանա չըգաճագ տըր։

«Իշթէ օղլում օ կիւն շու եօլտա տիւշիւնէճէք տիր.

«Էյէր թէ պիրինտէն պիրի հագգըը տըր, եա պանա տուա էթտիրէն վէ հաղորդութիւն ալտըրան վալիտէմ, վէ եախօտ հիչ պիր չէյէ ինանմայան մուալլիմիմ հագգըը տըր։

«Վալիտէմ հէր նէ գատար օլսա իինէ պիր գարը տըր, սաատէտիլ տիր։

«Հալպու քի մուալլիմիմ քիթապլար գարըշտըրմըշ էօմրիւնիւ չիւրիւթմիւշ պիր ալիմ տիր. էրքէք տիր»։

«Պու կիպի պիր մուհաքէմէտէն սօնրա, փուրթունայա օղրամըշ, պարչալանմըշ օլան պու րուհ արթըգ հիչ պիր չէյէ ինանմամագ։

«Ահ, սէվկիլիմ Անաթօլ, էսկիտէն պէրի օլան հուգուգըմըզա պինաէն, սանա րիճա էտէրիմ քի, քէնտիսինէ թէքմիլ հայիզամըը պօրճլու օլտուղըմ, գալպիմին պաքըյյէսինը արզու իթտիյիմ վէ կէօզիւմիւն պէպէյի կիպի սէվտիյիմ էվլատըմըն խայրը իչիւն վազ կէչ շու աշխարհական մէքթէպինտէն վէ օնը պիր քրիսթիյան մէքթէպինէ թէսլիմ էյլէ։

«Սամիմիյէթիմէ ինանմագլըղընըզը րիճա էտէրիմ։

ՇԱՐԼ»

*
* *

Իքի կիւն սօնրա աթիտէքի թէզքիրէյի ալտըմ.

«Սէվկիլի տօսթըմ,

«Սէրտ էյլէտիյին տէլիլլէր բէք գաթի տիրլէր։ Գարըմ պիւթիւն վալիտէլիք գալպիյլէ, իթինայըյլա իլք հաղորդութիւնա հազըրլամագ իւմէտիյի ճիկէրբարէսինին րուհընըն պէօյլէ մուխալիֆ ճէրէեանլարա գաբըլմասընա ասլա միւսաատէ էտէմէյօր։ Թավսիյէն իւզրէ էպէվէյն վէ մուալլիմ այնի եօլտա էօյրէթէճէքլէր։ Թէշէքքիւր իտէրիմ վէ պու թէպշիրիմլէ միւթէսէլլի օլուրսունըզ ֆիքրինտէյիմ։

«Սատըգ տօսթըն
ԱՆԱԹՕԼ»

Պու իքի մէքթուպ տա, պու կիւն էվլատլարը իչուն պիր մէքթէպ ինթիխապըյլա մէշղուլ պուլունան պիլճիւմլէ էպէվէյնէ արզ օլունըր։

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Ամանորի առթիւ Հռոմի Դիւանագիտական Մարմինը իր պաշտօնական շնորհաւորութիւնները մատոյց Ս. Հօր։ Աւստրիոյ դեսպանը, իբրեւ Կարգերէց Դիւանագիտական Մարմնոյն, թարգման հանդիսացաւ այլեւայլ ազգերու պատկանող Ընկերներուն։ Դեսպանը և իր Ընկերները այցելեցին ապա Վ.սեմ. Մէրի տէլ Վալ Կարդինալին և անոր եւս մատուցին իրենց շնորհաւորութիւնները։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ. — Աստուածայայտնութեան և Մկրտութեան տօնը կատարուեցաւ Աւագ Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ։ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ Ձայնաւոր պատարագ մատոյց և ջրօրհնէքի արարողութիւնը կատարեց Արհի. Յովսէփ Արքեպիսկոպոս Ռոքոսեան. Կ. Պատրիարքական Փոխանորդը։ Ս. Երրորդութիւն Եկեղեցին, ինչպէս արդէն ծանօթ է հասարակութեան, կը գտնուի Աւստրիոյ Օգոստափառ Կայսեր և Թագաւորին պաշտպանութեան տակ. ամէն տարի Յունուար 6ին Աւստրիական դեսպանը նոյն Եկեղեցւոյն մէջ ներկայ կ'ըլլայ սրբազան արարողութեանց։ Այս տարի Ն. Վ. Բալլավիչինի Մարքիզը չկարենալով անձամբ ներկայ գտնուիլ, իր կողմէ եկած էր Տօքթօր Լէշանովսքի, հետն ունենալով Մ. Մարքէ հիւպատոս և Թուլրօսի փոխ-հրամանատարը։ Մ. Յուխթա։ Եկեղեցին լի էր խուռն բազմութեամբ։ Արարողութիւնները տեղի ունեցան գեղեցիկ կարգապահութեամբ։ Յետոյ ընդունելութեան սրահին մէջ տնօրհնէք կատարուեցաւ և պատուասիրութիւններ եղան։ Հաւատացեալները և յատկապէս աւստրիական բարձրապատիւ պաշտօնեաները գոհ տպաւորութեան տակ մեկնեցան։

∴ Հաւաստի աղբիւրէ լսեցինք թէ Անկիւրիոյ Հայ-Կաթոլիկէ ժողովուրդը՝ որ արդէն ահագին մեծամասնութեամբ կը դատապարտէր հոգեւոր իշխանութեան քանի մը անձնական հակառակորդները, վերջերս ստուգեր է որ այդ անձինք, որոնք Պոլսոյ վարչական

քսուած ժողովոյ օգնութեամբը Ինկիւբիոյ մէջ հաւաժողով մը կազմելու յաւակնութիւններ մը ունեցած էին, ազգային սատանաներէն դրամ իրացուցեր են, ասոնց դէմ սատիկ զայրանալով, Բ. Ֆուռը դրկուելու համար հանրագիր մը պատրաստեր են ՀԱՅՈՒ ՀԱՅԱՐԷ ուելի ստորագրութեամբ...

Ամէն ծառ իր պտուղէն կը ճանչցուի... վախճանն պսակէ զգործ... Մեղաւորք մեղաւորաց-փոխ տան...

Դեկտ. 30ին Նգէքսանդրիոյ մէջ իր մահկանացուն կնքեց Գերշ. Տեփան Ծ. Վ. Վրոյրեան, Միաբան Զմմառու։ Հանգուցեալը ծնած է Մարաշ 1813ին և ձեռնադրուած է 1871ին։ Առաքելութեանց մէջ արդիւնաւոր կերպով աշխատած է, մանաւանդ Ադպէս, Մարաշ, Արթապ և Եգիպտոս՝ ժողովրդապետական պաշտօնով։

Կաթողիկոսական շրջաբերականով այս տխուր լուրը ծանուցուեցաւ ամէն Միաբաններու։

Հանգիստ՝ ի խաղաղութեան:



ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Սուլթան Օսման (Ռիօ տր Եանէյրո) տրէտնօթին գնումը մեծ խանդավառութիւն յառաջ բերաւ Թուրքիոյ բնակչութեան մէջ։ Ուստի կառավարութիւնը կը խորհի ուրիշ մէկ քանի մարտանաւեր ալ գնել։—«Համիտիէ»ի հրամատար Բէուֆ պէյ Սուլթան Օսմանի հրամատար անուանուեր է։

Յունաստանի մէջ մեծ տագնապ առթեր է Սուլթան Օսման տրէտնօթին գնումը, որովհետեւ անով Օսմանեան կառավարութիւնը Յունաստանէն կը խլէ Եգէական դերիշխանութիւնը, զոր ցարդ կը վայելէր նա շնորհիւ իր Ավերոֆ զրահաւորին։

Կը հաստատի թէ Հելլէն կառավարութիւնը կը բանակցի գնելու համար Զիլիական Այմիրանքա տրէտնօթը, որ պատրաստ պիտի ըլլայ առաջիկայ Մարտին։

Յունուար 5 թուականով Պէռլինէն կը գրուի թէ Յունաստան այժմ կը բանակցի Ֆրանսայի հետ երեք տրէտնօթ գնելու համար. և կը յուսացուի որ գործը արագօրէն կրնայ կարգադրուիլ։ Մ. Վէնիզէլոս շաբաթ օր Բարիզ պիտի մեկնի։

* Պատերազմական նախարար Իզզէթ փաշա հրաժարեցաւ։ Անոր տեղ նոյն պաշտօնին կոչուեցաւ Թուրքիոյ ազգային դիւցազնը, Էնվէր պէյ, կիսաբաժնի (մրրիվա) զօրավարի աստիճանով։ Այս աստիճանի բարձրացումը տեղի ունեցաւ ի վարձ Էնվէր պէյի Պէնկազիի և Պալքանեան պատերազմին մէջ մատուցած գովելի և անձնանուէր ծառայութիւններուն։

Էնվէր փաշայի Պատերազմական նախարար անուանուելովը Օսմ. բանակին հիմա ունեցած ամենէն կորովի ապան անցած կ'ըլլայ այդ պաշտօնին գլուխը։

* Զրոյց կը շրջի թէ նախորդ Պատերազմական նախարար Իզզէթ փաշա Ալպանիոյ իշխան անուանուած է։ — Մամուլի վերատեսչութիւնը բոլորովին շինծու և անհիմն կը համարի այս զրոյցը։

* Կայսերական իրատէով կիսաբաժնի զօրավարի աստիճան տրուեցաւ Հանր. Շինութեանց նոր նախարար Գնդ. Ճէմալ պէյի։

* Եգէականի կղզիներու մասին Երբեակ Զինակցութեան և Երբեակ Համաձայնութեան միջեւ անհամաձայնութիւնը դեռ կը տեւէ։

* Մահմուտ Մուխթար փաշա Փ. զօրաբանակին զինուորական քննիչ անուանուեցաւ։

* Պուլկարիոյ դահլիճին բացարձակ հրաժարումէն ետքը, Թագաւորը Մ. Ռատոսլավօֆի յանձնեց նոր դահլիճը կազմել։ Մ. Ռատոսլավօֆ շատերուն գիմումը ըրաւ բայց ոչ ոք յանձն առաւ իրեն մատակցիլ։ Ասոր վրայ Թագաւորը յատուկ Ուֆազով դարձեալ պաշտօնի կոչեց նախորդ հրաժարեալ դահլիճը։

* Մենելիք Բ., Եթովպիոյ կայսրը, որ հինգ տարիէ ի վեր անդամալուծութենէ կը տառապէր մեռեր է և իրեն յաջորդեր է Լիճ Եէասու, որ 1911էն ի վեր արդէն երկրին մէկ մասին վրայ կ'իշխէր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Մկրտութիւնը	17
Յիսուս Քրիստոս	20
Մանանայ	22
Երանելի Տէր Կոմիտաս Նահատակին պատմական երկու զրուցիւններ	22
Խարբերդի նորաբէն եկեղեցին	25
Լուի Վէյոյեոյի ներբողը	26
Եօթնեակ Քրիստոնէի	27
Այլեւայլ	28
Հիւսնի ինքիխապ	30
Տեղեկագրական	31

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԷՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ՔԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Պ. Արձագանգ Շաբաթաթերթի, Բերա, Պաւրամ փողոց թիւ 6, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տարեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— Մէկ թիւ՝ 1 դհկ.։— Արտասահմանի՝ տար. Ֆր. 10. վեցամս. 5.— Վճարումնք կանխիկ են։

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս։

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի Շաբաթ օրերը։ 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն ղրկուած ու և է յօդուած։ 3.— Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին։ 4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր։ 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն։ 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին։ 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դահեկանի նամականիշ ի միասին ղրկել։

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.։
Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.։

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5։ Տպարանս բոլոր ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար։ Կը տպուին ամեն տեսակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարտ-պոստալներ, մահազդներ, եւն. եւն.։ Գիները անմրցելի կերպով աժան են։ Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան։

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE : I. Schottenring

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapeste, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegenndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemysl, Salsburg, St. Poelten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

SUCCURSALES EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Péra et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.
Avances sur Marchandises.
Achat et vente de change sur l'Etranger.
Escompte d'effets de commerce.
Emission de chèques, et de lettres de crédit.
Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.
Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.
Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.
Ouverture de Comptes-Courants, ainsi que d'accreditifs simples et documentaires.
Exécution d'ordres de Bourse.
Garde de valeurs publiques etc. etc.
Caisse d'Epargne.
Locations de coffre-fort.